ՆՈՐ-ԴԱՐ

№171 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 26 Սեպտեմբերի, 1903 Ուրբաթ, 26 Սեպտեմբերի, ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 171

Տարին 10 րուբ. վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ. ամիսը՝ (Թիֆլիսում) 1ր., հասով 5 կ.։ Բաժանորդ ևն գրւում միմիայն խմբագրատանը՝ Դաւիդով. փողոց, № 5.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գինը 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ։

Երկարաւոր և ծանր հիւանդութիւնից յետոյ ամսիս 24-ին ի Տէր հանգեաւ Փուլթայիսի գործակալ

ԴԱՒԻԹ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԵԱՐԱԼԵԱՆ

Յայտնելով այս անդառնալի և թանկագին կորուստի մասին, հանգուցեալոյ փեսաները՝ Յովսէփ տաղ քահանայ Ամիրազեան և իւր տիրուհին Աննա, նոյնպէս միւս փեսան՝ Նիկողայոս Ռափայէլեան և իւր ամուսին Եղիսաբէթը խնդրում են ազգականներին, ծանօթներին և բարեկամներին, որ հանգուցեալի յիշատակը յայտնեն իրենց ներկայութեամբ։ Թաղումն է ամսոյս 28-ին, կիրակի օրը, Փուլթայիսի հայոց եկեղեցու գաւթում։

Ամբիծքը ամենայն երեկոյ 6 ժամին։

(256) 2—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։
Հայոց թատրոնի մասին։
Մամուլի չուրջը։
Սուլթաս վարդ. Պարսնեան։
Թղթակցութիւններ.—Ըմամախի։ Նամակ Պարսկաստանից։ Թեհրան։
Քաղաքական.—Ժողովրդական ցոյցերը Բուլղարիայում։ Սերբիական գործեր։ Թիւրքական ստրսափները Ազբրիանոպոլսի նահանգում։ Պիսա X-ի նորամուծութիւնները։
«Նոր-Դար»-ի հեռագրներ։
Խառն լուրեր։
Բանասիրական— Նկատք Քէօչքի պատերի ետև։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ներքին գործերի մինիստրութիւնը, ռուսաց և ֆրանսիական կառավարութիւնների միջև կայացած համաձայնութեան հետևանքով, առաջարկել է բոլոր նահանգապետներին, որ ֆրանսահռոմէական հիւանդներն ուղարկուեն իրենց հայրենիքը՝ Ֆրանսիա բժշկուելու համար, որովհետև ֆրանսիայում գտնուած ռուսահայտակներն ևս պիտի ուղարկուեն Ռուսիա նոյն նպատակով։

— Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը նոր սակագներ է հաստատել կառքերով քաղաքում չրջագայելու համար։

— Թոյլ է տրուած Ախալքալաք քաղքում հիմնել ռուսաց գիւղատնտեսական թղչնարուծութեան ընկերութեան ճիւղ։

— 1906 թուին տօնուելու է Դերբենտ քաղաքի ռուսաց կայսրութեան հետ միացելու հարիւրամեակը։

— Փինանսների մինիստրութիւնն առաջիկայ տարուայ իւր նախահաշուի մէջ մտցրել է երկու միլիոն րուբլի գիւղատնտեսական կարիքների համար։

— Կենդանիներին հովանաւորող Թիֆլիսի ընկերութեան անդամների վերջին ընդհանուր ժողովում որոշուած է, ի միջի այլոց, խնդրել ձիաքարշ երկաթուղու վրայ հսկող քաղաքային յանձնաժողովին, որ ոչ մի պայմանով թոյլ չտրուի ձիաքարշի վագոններում նստել որոշուած թուից, այսինքն 24 հոգուց աւելի մարդ։

— Կիրակի, սեպտեմբերի 28-ին, նշանակուած է Հալաբարում Արաքսեանի վարձած նորակառոյց թատրոնի բացումը։ Ներկայացուելու է Սունդուկեանցի «Պէպօ»-ն։ Հայերէն ներկայացումներն այդ թատրոնում տեղի պիտի ունենան չարաթը հրկու անգամ —կիրակ և չորեքչարթի օրերը, իսկ մնացած օրերը յատկացուած են ռուսերէն և վրացերէն ներկայացումներին։ Լսում ենք, որ մատչութիւն կայ նոյն թատրոնում մի չարք օպերային ներկայացումներ ևս տալու սեզոնի ընթացքում։ Տեղերի գները սկսւում են 30 կոպէկից և հասնում են մինչև 2 րուբլի։ Թատրոնում կայ բուֆետ, նուագելու է երաժշտական զինուորական խումբ. լուսաւորութիւնն էլեկտրական է։

— Կիրակի, սեպտեմբերի 28-ին, առաւօտեան 11—ժամին, Ալեքսեան ժողովրդական թատրոնի դահլիճում լինելու է թատերասէրների երկրորդ ժողովը, հայկական սեկցիայի հինգ նոր անդամների ընտրութեան համար։

— Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը վճռել է հանգուցեալ Ն. Շիօյեանի կտակած գումարով բանալ արհեստագիտական գպրոց։

— Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութեան կից կազմուում է մի առանձին յանձնաժողով Բագուի նաւթահանքերի հրդեհների դէմ ձեռք առնելիք միջոցների կանոնները քննելու համար։ Յանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու են Գովկասի կառավարչապետի կողմից կառավարչապետի խորհրդի անդամ պ. Միսկևիչ և Բագուի նահանգական ինժեները։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ
(Նամակ խմբագրութեան)

«Նոր-Դար»-ի խմբագրութեան յարգանօք խնդրում եմ թոյլ տալ ինձ երկու խօսք ասել թէև ոչ նոր, բայց մի հերթական հարցի մասին։

Ինչպէս յայտնի է, անցեալ տարի հայոց դրամատիրական ընկերութիւնները թէ Թիֆլիսում և թէ Բագուում դեֆիցիտներով փակեցին իրենց հաշիւները։ Ըրքան էլ ցաւալի լինի փաստը, պարզ է, որ դա իբրև արդիւնք մեր հայկական անտարբերութեան, ոչ առաջինն է և ոչ էլ վերջինն է լինելու։ Մենք, հայերս, ոչ միայն կենցաղավարական տարբեր պահանջներն, այլ և չատ բնորոշ հոգեբանութեան տէր ազգ ենք։ Մենք սիրում ենք ամեն բան ունենալ, բայց ունենալուց յետոյ երբ մեր անտարբերութեամբ կորստեան ենք հասցնում, սկսում ենք կոկսրդիլոսի արցունքներ թափել... Ապացոյց —մեր ազգային բոլոր հիմնարկութիւնները, որոնք միչտ էլ մեր գատապարտելի անտարբերութեան նահատակներն են եղել։

Սակայն անցնենք բուն հարցին։

Հայկական թատրոնը կարծէք երբէք էական պահանջ չի գառնալու մեզ համար։ այդ մասին նա չատ պերճախօս ապացոյցներ ունի իւր պատմութեան էջերում.—դրամատիրական ընկերութիւնների կազմակերպուելու և միչտ էլ դեֆիցիտներով կազմալուծուելու դէպքերը եղակի չեն եղել։ Թիֆլիսի և Բագուի դր. ընկերութիւնների անցեալ տարուայ պատմութիւնը գալիս է վերջին ապացոյցը լինելու մեր ասածների։ Հիմքեր կան արդեօք եզրակացնելու, որ այդ ընկերութիւնները, չենք ասում անմահ, գոնէ երկարակեաց կլինեն։ Բագուի դր. ընկերութիւնը արդէն հոգեվարքի մէջ է, եթէ միայն մինչև օրս չի մեռել, իսկ Թիֆլիսի դր. ընկերութեան մահուան բռպէները, չնորհիւ որոշ մարդկանց եռանդուն չանքերի, կարելի է ասել միայն առժամանակ յետաձգուած են։ Եւ մինչ հնարաւոր է այլ վերջ գուշակել, եթէ որ ինչպէս առաջիկայ, այնպէս և յետագայ տարի. ները նոյնպիսի անմխիթար ապացոյցներ պիտի չտան, ինչպէս անցեալ տարինները։

Սակայն ինչո՞ւ է այդպէս։ Ինչո՞ւ հայկական թատրոնը կարծէք երբէք չի կարողանում ոտքի վրայ կանգնել և ինքնուրոյն գոյութիւն ունենալ։ Ինչո՞ւ հայ հասարակութիւնը, որ ամեն տարի հազարաւոր րուբլիներ է ծախսում թատրոնի համար, չի կարողանում ապահովել նրա գոյութիւնը։ Ինչո՞ւ հայ հասարակութիւնը, որ ամեն տարի հազարաւոր րուբլիներ է ծախսում թատրոնի համար, չի կարողանում ապահովել նրա գոյութիւնը։

Ահա այդ հարցերի պատասխանները մենք կարծում ենք գտնել հետևեալ պատճառների մէջ։

Ամեն ինչից առաջ

ՊՈՒՐԱԿԱՆ ԵՎ ՊՈՒՐԱԿԱՆՑԻ ՎԱՃԱՌՔԸ

IX.

Ընթերցվի ամառանոցից գրած ճաշակաստեղծ թուդուզներս... Ես ինձ համարում եմ այդ ամառանոցի ամենաերջանիկ կինը, որովհետև ես ունեմ ամենաերջանիկ ամուսին, որ ինձ համար ամեն ինչ է: Ես ինչ ասեմ, նա անում է: Ես ինչ ուզեմ, նա ինձ տալիս է: Ես ինչ ցանկանամ, նա ինձ կատարում է: Ես ինչ երազեմ, նա ինձ իրականացնում է: Ես ինչ... Ես ինչ... Ես ինչ...

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐԱՆ

Ի ՀԱՄԱՐ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՏԱՐԻՔԻ

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ Է

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐԱՆ

շրջաններում ընդունուած են ոչ թէշնամական կերպով, իսկ մակեդոնական շրջաններում սկզբունքով ոչ-բացասաբար։ Ընդհանուր տրամադրութիւնն այնպէս է, որ իբրեւ վերահսկողութիւնը կարող է ընդունուել իբրև հիմք Մակեդոնիայի խաղաղեցման համար։

ՊԱՐԻԶ. —Ասում են, որ պարլամենտը դումարուելու է հոկտեմբերի 7-ին։

ԲԵՌԼԻՆ. — Զուիցերական պաշնակցական խորհուրդը Կրուպպին պատուէր տուեց շինելու նոր սիստեմի 288 թնդանօթ երեք տարուայ ընթացքում մատակարարելու պայմանով։

Սեպտեմբերի 25-ից

ՊՈՐՏ-ԱՐԹՈՒՐ. — ճարտարապետ-քանդակագործ Տէրենցոնին միջնորդութիւն է յարուցել Պորտ-Արտուրում ձրիավարժ ճարտարապետական - քանդակագործական ուսումնարան բանալու համար։

ՍԻՄՓԵՐՈՊՈԼ.—Զինուորական իշխանութիւնը ընդարձակում է Սպաշի ցեխարուժարանները և այդ նպատակով տեղացի գիւղացիներից գնել է 8 դեսեատին հող։

ՄՈՍԿՈՒԱ.— Տեղի ունեցաւ տուբերկուլիոզի դէմ կռիւ մղելու նպատակ ունեցող նոր մի ընկերութիւն հաստատելու ժողով։

ԳՈՒՐԻ.—Դոզրիի ցուցահանդէսում մրցութիւնները են կազմուում հող փորելու, ծառեր մաքրելու և պատուաստելու վերաբերմամբ, ինչպէս նաև գիւղատնտեսական մեքենաները փորձելու վնասակար տարրերի դէմ կռուելու միջոցների վերաբերմամբ։

ԲԵՌԼԻՆ.—Դրեզդենից, Բրեմէնից, Կիլից, Էմդէնից և Ֆրանկֆուրտից-Մայնի վ. տեղեկութիւններ են ստացուել տեղի ունեցած կատաղի փոթորիկների մասին, որոնք մեծամեծ վնասներ են պատճառել և ընդհատել հեռագրական հաղորդակցութիւնը։

ՎԵՆՆԱ.— Քաղաքային խորհուրդը որոշել է, որ Վեննիա մասնակցի Պետերբուրգում տեղի ունենալիք արհեստների ու արուեստների վերաբերեալ ցուցահանդէսին։

ՍՈՖԻԱ.—Բուլղարական զօրքի 24,000 հոգու զինուորակոչը, որ սովորաբար տեղի էր ունենում յունուար ամսում, պէտք է կատարուի հոկտեմբերի 8-ին։ Դրանից յետոյ, պէտք է կանչուեն պահեստի զօրքի բոլոր կարգերի ունտեր օֆիցերները երեք շաբաթուայ վարժութիւն անել տալու համար։ Ռազմամիջոցները արտասահմանից ստացուել են։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—

Ամերիկայի Սէն-Լուի քաղաքում մեռած հարուստ Ջէմս գրել էր իր կտակում ի միջի այլոց հետեւեալը ամն Բռիգ անունով մարդու մասին։ «Դնալով մի ուրիշ աշխարհ,—ասում է հարուստը, ես չեմ կարող մոռանալ այն մեծ ծառայութիւնը, որ մատոյց ինձ իր ժամանակին Բռիգը. մի ծառայութիւն, որի շնորհիւ ես ապրեցի բազուսը ու հանգիստ մինչև խորին ծերութիւն»։ Այդ ծառայութիւնը, որի համար այդպէս շնորհակալութիւն է յայտնում հարուստը, այն է՝ որ Բռիգը իր ժամանակին յափշտակել է Ջէմսի կնոջը։

* * *

Պարիզի բժիշկ գործոց Կուրս որոշել է մի Սանատորիա չինել թոքախտաւորների համար Մոմբլանի վրայ։ Հիւանդների վրայ այդտեղ մի շարք դիտողութիւններ անելուց յետոյ գործոց Կուրսը եկել է այն համոզման, որ Մոմբլանի լեռնային օդը չատ օգտակար է թոքախտով հիւանդներին։

* * *

Հռոմի կաթոլիկական շրջաններում մեծ չափազանցութիւն է առաջ բերել այն իրողութիւնը, որ Թրիեստում կեանքի ապահովագրական «Assicurazion Generali» ընկերութիւնը իւր ռեկլամների համար օգտւում է Պիոս X պապի անունից։ Բանն այն է, որ այժմեան պապը, դեռ եպիսկոպոս ժամանակ, իւր կանոքը ապահովագրել էր տուել յօգուտ իւր քոյրերի։ Բայց վերջին ժամանակներս պապը չէր կարողանում վճարել ընկերութեան իւր ամսականները, որովհետեւ ունեցած-չունեցածը աղքատներին էր տալիս և այսպիսով, նա իր ապահովագիրները նոյն իսկ գրաւ դրեց նոյն ընկերութեան մէջ։ Այժմ ընկերութիւնը իւր բոլոր յայտարարութեանց մէջ էլ մտցնում է պապի գրաւը նրա սեփական ստորագրութեամբ և չնորհիւ այդ ռեկլամների չատ չահաւէտ գործեր է կատարում կաթոլիկ հոգեւորականների ապահովագրութեանց մէջ։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՑԱՑ ՏԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՓԼԻՍԻ ՍԲՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ռուսական օպերա

Անsrեպրիզ Նորին Մեծութեան

ՍՈԼԻՍՏ Ն. Ն. ՖԻԳՆԵՐԻ

Ուրբաթ, սեպտեմբերի 26-ին,

կնեռկայացնի

ԵՒԳԵՆԻ ԱՆԵԳԻՆ

Օպերա 3 դործ. և 7 պատ., երաժշտ. Չայկովսկու։

Մասնակցում են՝ տ. տ. Ռենէ-Ռադինա, Ռոզիճովա, Սեզիուկ Ռոզնոտովսկայա, Լելինա, պ. պ. Ռայսկի, Սեմչաւին, Նէյլսով, Ֆէոդորով, Գաւրիլով, Պերկլի։

Գլխ. ռեժիս. Ն. Ն. Բոգոլիւբով։
Կապելմայստեր Ե. Ա. Պոզէն։

Սկիզբը ժամը 8-ին երեկոյեան։

Ընդ —Վաղը, շաբաթ, սեպտեմբերի 27-ին տեղի կունենայ առաջին «Գալա» ներկայացումը. կներկայացուի «Հուդենոտներ», օպերա 4 գործ., երաժշտ. Մեյէրբերի։ Կիրակի, սեպտեմբերի 28-ին, կներկայացուի 1. «Ռիգոլետտո», օպերա 4 գործ., երաժշտ. Վերդիի, II. բալետի դիւերթիսմենտ։ Տոմսակները վաճառւում են։

(252) 1—1

Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան, պատկերազարդ, Ե. տարի։ Գազմեց Հ. Յովհաննիսեան։ Գինն է 50 կոպ։ Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներին։ (254) 5—3

ՄԱՍՍԱԺ ԱՆՋԱՄԻԱՆԻՑ

Օլէոգրաֆ պաճուճ

Ս. Էջմիածնի 1600-ամեակի առթիւ։ Ամեն մի ճշմարիտ հայի սրտին մօտիկ նուիրական Ս. Տեղւոյ այս գեղեցիկ նկարը, 75 սանտիմետր մեծութեամբ և 12 գոյնով, պատրաստուած է խնամքով և վաճառւում է հատը 2 ր., ճանապարհածախսով 2 ր. 18 կոպ. Ճանկացողները պիտի դիմեն՝ Армавиръ (Куб. обл.), фотографу М. Папазянъ,

Կարելի է դիմել նաև Թոստովդոնի վրայ, Վլադիկաւկազ և Արմաւիր եղբ. Գուրջհաններին։

5—1

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ա. Միխթարեանց

ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, մորթու և վէներական ախտ ունեցող հիւանդներին։

Քիմիկո-մկրոսկոպիական կաբինէտ
Առաւօտը 12—2
Երեկոները 5—6
Մեծ Վանքի փողոց տուն Կուզանովի
(1141) 100—72

Լոյս տեսաւ առաձին գրքոյկով
ՉԻՐՎԱՆՋԱԴԷ

ԵՒԳԻՆԷ

դրամա 3 գործ.

Գինն է ճանապարհածախսով 50 կոպ.

Դիմել Գուտաեներբերգ գրավաճառանոցին «Պրոգրեսս» խանութին Թիֆ. Ծողովրանի տակ) նաև հեղինակին—Тифлисъ Ширванзаде (249) 5—3

Բացուած 1883 թուականից

ՎԵՐԱ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՆԱ

ԴՐԻՆԷՀԱՑԻ

(երբեմն Դրժևեցա-կովաչի)

պատրաստական դպրոցը պանսիոնով ընդունում է երեխաների պատրաստելու բոլոր միջնակարգ դպրոցներ մրցելու համար։

Հասցէն՝ Թիֆլիս, Սապեռնի փողոց տ. Գլուշարևի, բժշկական վարչութեան շարքում։ 20—17

ՀՈՒՅՍ ՏԵՍԱՒ ՈՐ ՎԱՃԱՌՔՈՒՄ Է

Թիֆլիսի, Դանճակի եւ Բագուի գրավաճառանոցներում

„ՍՈՒՍԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

Ազգային լիակատար Երգարանի առաջին հատորը՝ հինգերորդ տպագրութեամբ, բարեփոխուած թէ հին, գործածական և թէ նոր երգերով և բանաստեղծութիւններով, բաղկացած 382 մեծադիր երեսներից։ Սոյն հատորի մէջ տպուած են հանդուցեալ Մելքիսեդեկ Սրբազան Մուրատեանի «Գեղամայ ծովակ», «Խաչ, օգնեա՛ ինձ», «Բուրաստան», «Զայն», «Մրմունջ պանդխտին» և այլ քանի մի ընտիր բանաստեղծութիւնները, «Նէեմիա», «Ասղիկ» «Մ. Ե. Մ.» ստորագրութեամբ։

Իւրաքանչիւր օրինակի գինն է 1ր., ճանապարհածախսով—1ր. 20կ.։ Օտարաքաղաքացիք դիմում են Բագու, «Սոխակի» հրատարակչին, սոյն հասցէով. Протоіерею Григорію Григоріанцъ, Баку. Հրատարակչից 10 և աւելի օրինակ «Սոխակ» պահանջողը ճանապարհածախս չէ վճարում։ (250) 4—3

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը

յայտարարում է ի գիտութիւն ըմպհանրութեան, որ հոկտեմբերի 2-ին, օրուայ ժամը 1-ին, իւր առեւանում տեղի կունենայ աճուրդ կապալով տալու 300 քառ. սաժէն տարածութեամբ քաղաքապատական մի հողաբաժին Մուշտայիդեան փողոցում, Թիֆլիսի տրամվէյի պարկի դիմաց, վառելափայտի, շինարարական նիւթի և խոտի ու պարմանի պահեստի համար։

Ցանկացողները կարող են պայմաններին տեղեկանալ ամեն լի օր առաւօտեան ժամը 9-ից մինչև ժամը 2-ը կէսօրից յետոյ քաղաքային վարչութեան 4-րդ բաժանմունքում։ Փակ ծրարները կը ընդունուեն մինչև աճուրդի սկիզբը։ Աճրդախօսները պարտաւոր են ներկայացնել 200 ր. գրաւական։ (255 2—2

ԳՈՐԾԱՐԱՆԱՑԻՆ ՊԱՀԵՍՏ

Գ. Ի. ՊԱՎԼԻՋԵՆԻ

ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ,

ՌԸԹԵԻ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ,

ԿՈՉԵԼԵԻ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, Դալաչինսկիյ պրոսպ., տ. Մանթաչեանի,
Բագու, Օլդինսկայա փող., տ. քաղաքային վարչութեան։
Պոստի, գրելու, դրքերի, ալբոմների, տպագրական, լրագրական մունդ շտուկի, փաթաթելու թղթե, մատիտներ, ծրարներ, գրելու և փետուրներ

Պարագաներ՝ Տելեֆոն 67. 149 24—19

„ԳՐԱՄՈՖՈՆ“

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



Թիֆլիս, Դալաւ. պրոսպէկտ, տան Արիւնեանի № 7։ Հասցէն հետագրի համար Թիֆլիս Գրամոֆոնի ընկերութիւն. հեռախօս № 69.

„ԳՐԱՄՈՖՈՆ“

Մեծ հանկուրեամբ բազմատեսակ ամենակատարելագործուած գրամոֆոններ։

Ամենից հանկուրեամբ պլաստինները յայտնի և երեւելի երգիչների ռուս, հայ, վրացի, թիւրք, պարսիկ, լեհացի, ֆրանսիացի, անգլիացի, իտալացի, գերմանացի և այլն։

Պլաստիների ընտրութեան ժամանակ, խնդրում ենք ուշադրութիւն դարձնել մեր գործարանի «հրեշտակը գրելիս» կնիքի վրայ, առանց այդ բանին պլաստինները անպայման կեղծ են։

Ընկերութեան պահեստին հետ կայ յատուկ գործարան, որտեղ, հարկ պահանջած դէպքում ուղղում են գրամոֆոնները։

Գրամոֆոնների կանոնաւոր բանելու մասին, երեք տարուայ համար երաշխաւորութեան թուղթ է տրւում։

Ապրանքը փաթաթելու և կապելու ծախքը մագազինի հաշուին է։

Ապարատների առաքումը մինչև բոլոր երկաթուղիների կայարանները (նոյնպէս և ամառուայ ամիսներին՝ նաւահանգիստները) ընկերութիւնը իւր հաշուով է անում։

Պոստով առաքման ծախքի կէսը «Գրամոֆոնի» ընկերութիւնը իւր վրայ է առնում։

Կիրակի օրերը խանութը փակ է իսկ միւս օրերը առաւօտեան ժամը 8-ից մինչև երեկոյեան ժամը 9-ը բաց։

ՊԱՀԱՆՋՈՂԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԿԱՏԱԼՈԳՆԵՐ

Մեծ քանակով առնողներին ուղարկւում է ըստ պահանջման նոր պրէյսկուրանտներ։ (224) 30—21

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց համար

(Баку, Прачешная, домъ Теръ Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդւում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրայ 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առեւտրական և բանկային 3) Առեւտրական թղթակցութիւն 4) Առեւտրական տնտեսագիտութիւն 5) Առեւտրական և մաքսհսկային օրէնքներ. 6) գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագրութիւն). 7) Ուսուցչուհի գրով մնջեայի վրայ։

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սկսւում է սեպտեմբերի 1-ից ամենայն օր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։

Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа)—տրւում և ուղարկւում են ձրի տարբ։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, Учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову

(208) 30—19

Дозволено Цензурою 25-го Сентября 1903 г. Վերէիչն և Կամենմախեր Типографія Вереичевъ и Каменмахеръ Михайл. пр. Телеф. №852